AMBASSADE
DE FRANCE
EN ARMÉNIE
Liberté
Égalité
Fraternité

ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
և
Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության միջև

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 3, ք. Երևան

մի կողմից,

և

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունը
Հասցե՝ Գրիգոր Լուսավորիչ 8, ք. Երևան

մյուս կողմից,

միասին այսուհետ՝ « Կողմեր »,

համաձայնության եկան ներքոգրյալի վերաբերյալ.

Այս հուշագրի միջոցով Ֆրանսիան և Հայաստանը իրենց կամքն են հայտնում համագործակցության հարաբերությունների հիմքում դնելու պատմամշակութային ժառանգության պաշտպանությունն ու արժևորումը՝ գիտակցելով, որ ժառանգությունը խաղաղության և փոխըմբռնման միջոց է:

Ավելի քան մեկ տարի տևած երկխոսության արդյունքում Կողմերը պարտավորվում են համատեղ նախաձեռնություններ իրականացնել հայկական մշակութային ժառանգության պահպանման և արժևորման ոլորտում: Այս նպատակով Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունը և ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը համաձայնում են համագործակցել «Հայաստան. ժառանգության ոլորտում վերապատրաստում, ժառանգության պահպանում և արժևորում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպայի և արտաքին գործերի նախարարության նորարարական նախագծերի համերաշխության հիմնադրամի (FSPI) կողմից:

Գործարկվելով 2022թ. հուլիսից մինչև 2023թ. դեկտեմբեր՝ նախագիծը նպատակ է հետապնդում աջակցելու Հայաստանին՝ իր ժառանգության պահպանության, վերականգնման և արժեքորման գործում:

600 000 եվրո բյուջեով այս նախագիծը արտահայտությունն է Հայաստանի հետ միասին իր քաղաքականությունը ժառանգության և թանգարանների ոլորտում ընդլայնելու և ամրապնդելու Ֆրանսիայի հանձնառության:

Նախագիծը մշակվել և իրականացվելու է ֆրանսիացի և հայ դերակատարների և օպերատորների հետ համագործակցությամբ, ինչպիսիք են Ժառանգության ազգային ինստիտուտը, Լուվրի թանգարանը, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնը եւ Էրեբունու թանգարանը:

Նախագիծն ունի երեք ուղղություն.

1. Առաջին ուղղությունը վերաբերում է հայկական մշակույթի ոլորտի մասնագետների հմտությունների ամրապնդմանը՝ ժառանգության վերականգնման և պահպանման ոլորտի մասնագետների համար շարունակական կրթության ցիկլի ստեղծման միջոցով:

   Ծրագրի այս ուղղությունը գործարկվում է Ժառանգության ազգային ինստիտուտի և Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի կողմից:

2. Երկրորդ ուղղությունը վերաբերում է Տաթևի Մեծ Անապատ վանքային համալիրի վերականգնմանը: Նախագծի առաջին փուլով նախատեսվում է իրականացնել հուշարձանի պատմաճարտարապետական հետազոտությունը, ինչպես նաև, նախքան շինության բուն վերականգնման աշխատանքների մեկնարկը, կազմակերպել առաջին կամավոր աշխատանքային ճամբարը:

3. Երրորդ ուղղությունը նվիրված է Լուվրի թանգարանի հետ համագործակցությամբ Էրեբունու թանգարանի մշտական ցուցադրության վերաձևավորմանը: Նպատակը թանգարանի ցուցանմուշների լավագույնս արժեքորումն է:

Կողմերը պարտավորվում են համագործակցել այս ծրագրի իրականացման շրջանակներում՝ ի նպաստ հայկական ժառանգության պահպանման, պաշտպանության և արժեքորման:

Կնքվել է 2022թ. հուլիսի 11-ին ք. Երևանում, հայերեն և ֆրանսերեն երկու հավասարազոր օրինակից:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Հայաստանում Ֆրանսիայի դեսպանություն
Վահրամ Դումանյան	**Անն Լույո**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար	Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան

AMBASSADE
DE FRANCE
EN ARMÉNIE
Liberté
Égalité
Fraternité

Déclaration d'intention

entre le Ministère de l'Education, des Sciences, de la Culture et des Sports de la République d'Arménie

et l'Ambassade de France en Arménie

ENTRE

Le Ministère de l'Education, des Sciences, de la Culture et des Sports
Siège social : 3, rue Vazgen Sargsyan, Erevan, Arménie
d'une part,

ET

L'Ambassade de France en Arménie
Siège social : 8, rue Sourb Grigor Loussavoritch, Erevan, Arménie
d'autre part,

ensemble désignés « les Parties »,

il est convenu ce qui suit :

Par cette déclaration, la France et l'Arménie manifestent leur volonté de placer la sauvegarde et la valorisation du patrimoine au cœur de leur relation de coopération, conscientes que le patrimoine est un vecteur de paix et de compréhension mutuelle.

Dans la continuité du dialogue engagé depuis plus d'un an, les Parties s'engagent à mener des initiatives communes dans le domaine de la sauvegarde et de la valorisation du patrimoine arménien. Dans cette perspective, l'Ambassade de France en Arménie et le Ministère de l'Education, des Sciences, de la Culture et des Sports de la République d'Arménie sont convenus de coopérer dans le cadre du projet « Arménie : formation, préservation et valorisation du patrimoine », financé par le Fonds de solidarité pour les projets innovants (FSPI) du Ministère de l'Europe et des Affaires Etrangères.

Mis en œuvre de juillet 2022 à décembre 2023, le projet vise à accompagner l'Arménie dans la protection, la restauration et la valorisation de son patrimoine. Doté d'un budget de 600 000€, il marque l'engagement de la France aux côtés de l'Arménie dans le déploiement et renforcement de sa politique patrimoniale et muséale.

Le projet est conçu et sera mené en partenariat avec des acteurs et opérateurs français et arméniens, dont l'Institut National du Patrimoine, le musée du Louvre, le Centre de recherche du patrimoine historique et culturel et le musée d'Erebuni.

Le projet se décline en trois volets :

1. Le premier volet relève du renforcement des compétences des professionnels de la culture arméniens à travers la mise en place d'un cycle de formation continue, à destination des restaurateurs et conservateurs du patrimoine.
   Ce volet est mis en place par l'Institut National du Patrimoine, en coopération avec le Centre de recherche du patrimoine historique et culturel.

2. Le deuxième volet porte sur la restauration du Grand Ermitage de Tatev. La première phase du projet permettra de réaliser les études architecturales préalables à la rénovation du monument et d'organiser un chantier volontaire avant de procéder à sa restauration.

3. Le troisième volet est dédié à la refonte muséographique du parcours permanent du musée d'Erebuni, en collaboration avec le musée du Louvre. Il vise à une meilleure valorisation des collections.

Les Parties s'engagent à collaborer pour la mise en place de ce projet, en faveur de la sauvegarde, la protection et la valorisation du patrimoine arménien.

Fait le 11 juillet 2022 à Erevan, en deux exemplaires, en langues française et arménienne,

Pour le Ministère de l'Education, des Sciences, de la Culture et des Sports de la République d'Arménie **Vahram Doumanian** Ministre de l'Education, des Sciences, de la Culture et des Sports de la République d'Arménie	Pour l'Ambassade de France en Arménie **Anne Louyot** Ambassadrice de France en Arménie